ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԿՈՍ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ
(ԺԷ դ., Կ. Պոլիս)

Հայ միջնադարյան ձեռագրերից ոչ բոլորն են, որ ունեն իրենց ինքնությունը հաստատող հավաստի վկայություններ. հայտնի չեն գրչության վայրը, ժամանակը, նաև գրիչն ու ծաղկողը: Այդ իսկ պատճառով դրանցից շատերը դուրս են մնացել գիտական տեսադաշտից:

Նույն բախտին էր արժանացել նաև Պալաթիայի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու թիվ 18 Ավետարանը:

Դոկտոր Պարույր Մուրադյանը ժամանակին Երևան է բերել մատյանի մանրանկարների նմանահանությունը և հանձնել արվեստաբան դոկտոր Հրավարդ Հակոբյանի քննությանը: Ելնելով ձեռագրի մանրանկարների ոճական ու պատկերագրական առանձնահատկություններից, պրոֆ. Հակոբյանը հաստատել է Գ. Փամբուքճյանի այն կարծիքը, թե ձեռագիրն իրոք պետք է վերագրել ԺԷ դարին, իսկ նկարազարդումը հիշեցնում է Կ. Պոլսի շքեղազարդ մատյանները: Ավետարանի ուսումնասիրությունն իր մի քանի գունատիպ պատկերներով հրատարակվել է «Ծողակաթ» հանդեսում[1]:

Կ. Պոլսի հայ գաղթօջախի գրչատներում ստեղծված և Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մատյանների ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն մտքին, որ Պալաթիայի Սուրբ Հրեշտակապետ եկեղեցու թիվ 18 Ավետարանը պետք է գրչագրված լինի Կ. Պոլսի Ս. Հրեշտակապետաց եկեղեցուն կից գրչատանը և ընդօրինակված տեղի վարպետ նկարիչ Մարկոս Պատկերահանի ձեռագիր օրինակից: Այդ են հաստատում Ավետարանի պատկերագրական մանրամասների նույնությունը՝ ավետարանիչների, նրանց խորքերի ճարտարապետական կառույցների ձևավորումն ու գունային համադրման միևնույն լուծումը: Ստեղծված դիմապատկերները ոճական առումով տարբեր են. Մարկոս Պատկերահանի ստեղծած կերպարներն անհամեմատ ավելի կատարյալ են: Այստեղ նկատելի է ԺԷ դարի նոր զարգացող գեղանկարչական արվեստի նկատմամբ ցուցաբերվող մոտեցումը:

---

[1] Հակոբյան Հ., Պալաթիայի Սուրբ Հրեշտակապետ եկեղեցու թիվ 18 նկարազարդ Ավետարանը, «Ծողակաթ» եկեղեցական մշակութային բանասիրական հանդես, 1995, էջ 70:

Պալաթիայի թիվ 18 ձեռագրի նկարների սերտ աղերսները Մարկոս Պատկերահանի արվեստի հետ առիթ հանդիսացան ներկայացնելու ԺԷ դարի այս շնորհալի նկարչի ստեղծագործական ժառանգության համառոտ նկարագիրը:

Կ. Պոլիսը 17-րդ դարում առևտրական մեծ կենտրոն էր դարձել: Այստեղ էին ձգտում նաև հայ վաճառականներն ու արհեստավորները, կառուցող վարպետներն ու արվեստագետները: Մեծանում էր նաև հայերեն ձեռագրերի պահանջը. պատվիրում էին առավելապես շքեղ նկարազարդված մատյաններ, որոնք աչքի էին ընկնում իրենց հարուստ գունաշարով, իսկ օգտագործված ոսկին նկարները դարձնում էին ավելի ճոխ ու թանկարժեք:

Մարկոս Պատկերահանի մանրանկարներից

Ձեռագրերի հարուստ նկարազարդման հնարավորությունը նկարչին մղում էր դիմելու ստեղծագործական լայն հնարանքների: Որքան հնարավոր էր, կանոնական նկարները հարստացվում էին նորանոր թեմատիկ պատկերներով, որոնցից շատերն ստեղծելիս նկարիչն արդեն ազատ էր իր ընտրության մեջ և որքան հնարավոր էր, աշխատում էր ընտրել այնպիսի հորինվածքներ, որոնք առնչվում էին իրական կյանքի, մարդկանց կենցաղի մեջ մտած սովորույթների հետ:

Այս տեսակետից բացառիկ արժեք ունեն 17-րդ դարի Կ. Պոլսի հայ մանրանկարիչ Մարկոս Պատկերահանի ստեղծագործությունները: Նրա մասին մեզ հասած կենսագրական տեղեկությունները շատ չեն: Իր ընդօրինակած ձեռագրերում պահ-

պանված մակագրություններից կարելի է իմանալ, որ նա ապրել ու ստեղծագործել է Կ. Պոլսում[2]: Եղել է նաև Էջմիածնում, որտեղ նկարիչ Մաղաքիա Կոստանդնուպոլսեցու հետ նկարազարդել է Կ. Պոլսից բերված Աստվածաշունչը[3]: Այս վերջին տեղեկությունը խոսում է այն մասին, որ Մարկոսը անուն վաստակած նկարիչ էր և որպես այդպիսին հավանաբար հրավիրվել էր Էջմիածին: Տեղեկություն կա նաև նրա որդու՝ Գաբրիելի մասին, որը նույնպես զբաղվել է մանրանկարչությամբ՝ անշուշտ սկզբնական կրթությունն ստանալով հոր արվեստանոցում: Այդ մասին Մարկոսը գրում է. «Եւ զծաղկող սորին Մարկոս Պատկերահանս եւ զորդեակն իմ զԳաբրիել Պատկերահան»[4]:

Մարկոս Պատկերահանի մանրանկարներից

Մարկոսի նկարազարդումով մեզ նայտնի է տասնմեկ ձեռագիր, որոնցից երեքը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, վեցը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանում, մեկը՝ Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում, և մեկը՝ Էջմիածնի Մայր Աթոռի Մատենադարանում[5]: Ձեռագիրն ընդօրինակել է 17-րդ դարի երկրորդ կեսին, 1651-1686 թթ.: Նրա աշխատանքի հիմնական վայրերը եղել են Կ. Պոլսի Ս. Նիկողայոս և Ս. Հրեշտակապետաց հայկական եկեղեցիներին

---

[2] ՄՄ Ձեռ. 349, 1686 թ., Կ. Պոլիս, Էջմիածին:

[3] Երուս. Ձեռ. 2289, էջ 36:

[4] Գեւորգեան Ա., Հայ մանրանկարիչներ: Մատենագիտութիւն IX-XIX դդ., Գահիրէ, 1998 թ., էջ 376: Մարկոսի ընդօրինակած ձեռագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ տե՛ս Նորայր արքեպս. Ծովական, Հայ նկարողներ (ԺԱ-ԺԷ դդ), Երուսաղեմ, 1989, էջ 209:

[5] ՄՄ Ձեռ. 2577, թ. 316 բ:

կից գրչատները: Մարկոսը, բացի իր որդուց, ունեցել է նաև այլ աշակերտներ: Դպիր Մատթեոս Զափարեցին 1655 թ. Կ. Պոլսում նկարազարդած Ավետարանում հիշատակում է, որ մասնագիտական կրթությունն ստացել է վարպետ Մարկոսի մոտ[6]: Հիշատակարաններից տեղեկանում ենք նաև, որ թե՛ Մարկոսը, և թե՛ որդին կոչվել են «Պատկերահան»: Պետք է ենթադրել, որ նրանց հիմնական զբաղմունքը եղել է դիմանկարչությունը: Այդ մասին են վկայում դիմանկարների այն հարուստ շարքը, որ հանդիպում է Մարկոս Պատկերահանի ընդօրինակած 1651 թվականի Հայսմավուրքում: Այստեղ կարելի է տեսնել սրբերի շարքը դասված միջնադարյան գործիչներից շատերի դիմապատկերները՝ Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Եղիշե, Հովհան Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի և ուրիշներ: Պատկերահանն իր մակագրությունները թողել է Հայսմավուրքի լուսանցքներում նկարված սրբապատկերներից մի քանիսի վրա: Դրանք մնացել են անհայտ, որի պատճառով ձեռագրի մանրանկարները մինչև այժմ դիտվում էին որպես անհայտ հեղինակի գործեր:

Թվարկված դիմապատկերները, ինչպես տեսանք, նկարչին ոչ ժամանակակից մարդիկ են, այսինքն՝ մտացածին նկարներ: Սակայն հմուտ պատկերահանի վրձնած յուրաքանչյուր պատկեր ունի տվյալ անձը բնորոշող համոզիչ հորինվածքային լուծում: Այսպես, օրինակ, Մովսես Խորենացու ձեռքին կա բացված գիրք, իսկ կողքին՝ եկեղեցի, որի շնորհիվ հորինվածքի ամբողջությունը խորհրդանշում է Եկեղեցու և հայ մշակույթի դերը հայ ժողովրդի հարատևության համար: Կամ՝ Մեսրոպ Մաշտոցը, որպես հայկական տառերի ստեղծող, պատկերված է բացված մատյանը բարձր պահած:

Արժեքավոր են նաև Ավետարանները հարդարող տերունական պատկերները: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում խորհրդատետրերը՝ իրենց ծիսական բազմաբնույթ պատկերներով, որոնցից մեկում Մարկոսը պատկերել է ինքնանկարը[7]:

Մարկոս Պատկերահանի արվեստի գնահատելի կողմերից առավելագույն արժեքավորն այն է, որ նա, բացի այն, որ կրոնական կանոնական պատկերները համեմում է միջավայրի առարկաներով, միաժամանակ գրքի բովանդակությունից ծաղկաքաղ է անում համապատասխան մոտիվներ և դրանք օգտագործում զուտ աշխարհիկ կյանքի հետ առնչվող թեմատիկ պատկերներ ստեղծելու նպատակով: Ամենուրեք զգացվում է նկարչի համակրանքը աշխատավոր մարդու և նրա առօրյա զբաղմունքի հանդեպ: Այդպիսի մի տպավորիչ գեղարվեստական պատկեր է Աստվածաշնչի «Իմաստութիւն Սիրաքայ» գրքի «Օրենսգէտի առաւելութիւնը արհեստաւորի վրայ» (Գլ. ԼԸ 25) պատումից բխող նկարաշարը: Նկարիչն ստեղծել է

---

[6] ՄՄ Ձեռ. 1502:

[7] Երուս. Ձեռ. 2276, թ. 4:

հողագործի, դարբնի, ճարտարապետ-նկարչի աշխատանք ներկայացնող ուշագրավ պատկերներ:

Մարկոս Պատկերահանի ստեղծագործություններում արտահայտված են նաև սոցիալ-կենցաղային վիճակներ: Այս թեմայի համար հիմք են հանդիսացել Հայսմավուրքներում եղած վարք-վկայաբանությունները: Սրանք մեծ մասամբ պատմագիտական մեծ արժեք ունեն և ներկայացնում են միջնադարյան գեղարվեստական արձակի ուրույն տեսակ:

Հայ միջնադարյան գեղարվեստական արձակը վաղուց արժանացել է հայագետների ուշադրությանը: Հրատարակվել են արձակի տարբեր ժանրերի երկեր՝ առասպելներ, բարոյախոսական խրատներ ու առակներ, քրիստոնեական լեգենդներ ու պարականոն զրույցներ և դրանց նվիրված գիտական ուսումնասիրություններ (Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Մ. Ավդալբեկյան, Ա. Սրապյան, Ք. Տեր-Դավթյան): Մանրանկարները լրացնում են գեղարվեստական ստեղծագործությունների շարքը:

Մարկոսի ուշադրությունից չեն վրիպել այնպիսի գեղարվեստական արձակ գործեր, որոնք աղերսվում են ժողովրդական հեքիաթների հետ. դրանք ներկայացված են պատկերավոր հորինվածքներով: Կարելի է հիշատակել՝ «Երեմիա մարգարէին եւ աշակերտաց նորա եւ Աբամելիքա», կամ «Տօն է Մովսէսի եւ Ահարոնի եւ քվեր նոցա»: Այս վերջինում Մարկոսը պատկերել է, թե ինչպես Փարավոնին են ներկայացնում մանկանը, որի անմեղությունը փորձում են ոսկով ու կրակով: Նման պատմություն ծանոթ է հայկական ժողովրդական բանահյուսությունից՝ «Սասնա ծռեր» էպոսից, որտեղ Մսրա Մելիքը փորձում է մանուկ Դավթին չամիչով ու կրակով:

17-րդ դարի հայ գաղթօջախների մանրանկարչությունն ուներ ուրույն ոճավորում ու պատկերագրական ձևավորում: Աստվածաշնչական թեմատիկ նկարներում թափանցում էին հատկապես քաղաքային կյանք մուտք գործած եվրոպական սովորույթներն ու մտածողությունը: Փոխվել էր նաև ձեռագրերի պատվիրատուների սոցիալական պատկանելությունը: Դրանք մեծ մասամբ մեծահարուստ վաճառականներ էին, որոնք սերտ հարաբերության մեջ են եղել Արևելքի ու Արևմուտքի երկրների հետ: Նրանք իրենց հետ բերում էին պերճաշուք առարկաներ, որոնց թվում և ձեռագիր մատյաններ: Հայ արվեստին սերտորեն զուգակցում էր եվրոպականը: Կանոնական նկարներից շատերը ստանում էին հորինվածքային նոր ձևավորումներ, որոնցում ներթափանցում էին մեծատան կենցաղի մեջ մտած սովորույթները, իրերն ու առարկաները: Այս ամենն իր արտահայտությունն է գտել նաև Մարկոս Պատկերահանի մանրանկարներում: Ավետարանի «Քրիստոսի ծնունդը» պատկերում մեծ մասամբ ներկայացվում են մոգերի երկրպագությունը, հովիվների ավետումը: Մարկոսի մոտ Աստվածամորն այցելել են հրեշտակներ՝ բերելով ծաղիկներ ու մրգեր, իսկ միջավայրը շքեղ, այունազարդ սրահն է:

Նկարիչը հաճախ հորինվածքները հետաքրքրական է դարձնում բնապատկերման շնորհիվ: Այդպիսի նկարներից մեկի այուժեն վերցված է Աստվածաշնչից. «Աստված կանչում է Մովսեսին» (Ելք Գ 2): Պատկերված է գեղեցիկ բնանկար մորենու թփերով, որտեղ Մովսեսը ոչխարներ է արածեցնում: Մարկոսն իր հորինվածքների խորքը երբեմն ծածկում է ոչ թե միագույն ներկվածքով կամ ճարտարապետական համալիրով, այլ բնապատկերով: Հաճախ ոճավորված բուսական զարդաձևերին փոխարինել են բնական ծաղիկներ՝ մեխակ, վարդ, կակաչ, մանուշակ և այլն: Լուսանցքներում պատկերել է առօրյա գործածական այնպիսի իրեր ու առարկաներ, որոնք ոչ մի առնչություն չունեն գրքի բովանդակության հետ. օրինակ, լուսանցքներից մեկում պատկերել է շքեղ սեղանիկ, վրա՝ ժամացույց, մյուս կողմում՝ արձանիկ, իսկ մեջտեղում՝ գեղեցիկ ծաղկաման՝ բնական ծաղիկներով: Մեկ այլ լուսանցքում պատկերված է սեղանիկ, մեջտեղում՝ մրգով լի սկուտեղ և շուրջը՝ ծաղիկներ:

Քիչ չեն նաև պատկերագրություններում ներմուծված արհեստավորական երկրագործական գործիքներն ու զենքերի հարուստ տեսակները, երաժշտական գործիքները, որոնք մեծ արժեք են ներկայացնում նաև ազգագրության համար:

Գեղեցիկ են Մարկոսի ստեղծած զարդատառերը, որոնք կազմված են զանազան թռչունների, կենդանիների ու մարդկանց պատկերների համադրությամբ, սքանչելի սիրամարգերի կամ վիշապների ու օձերի հյուսվածքներով, մարդկանց ու կենդանիների ճկուն կեցվածքներով:

Մարկոս Պատկերահանի ստեղծած կանացի կերպարներն արտահայտում են հմայք ու մայրական գորովանք (Սուրբ Սոֆիային նվիրված տոնի առթիվ պատկերված է Ս. Սոֆիան իր դուստրերի հետ):

Հետաքրքրական են նկարչի նկարազարդ խորանների զարդամոտիվները, որոնց մեկնությունները հավանաբար կատարել է ինքը: Դրանք գրված են յուրաքանչյուր խորանի տակ: Հայտնի են Ստեփանոս Սյունեցու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու և ուրիշների կատարած մեկնությունները, որոնք Եկեղեցու կողմից սահմանված խիստ կանոնական, զուսպ նկարաշար ունեն: Շնորհալու խորանազարդերի կանոնական ձևերը համապատասխանում են նրա սահմանած եկեղեցական այն կանոնին, որտեղ, ինչպես Ջանաշյանն է նշում, Շնորհալին կողմնակից է «սանձելու արտակարգ երևակայությունը, չափավորելու ճոխություններ զարդելու, մնալու համար սրբազան շունչի սահմանին մեջ»[8]: Հակառակ դրա, Մարկոսի խորանների մեկնությունները ոչ թե պատճառաբանում են խորանազարդի յուրաքանչյուր հատվածի իմաստը, այլ պարզապես ներկայացնում են, թե ինչ պետք է նկարել և ինչպիսի հորինվածքով:

Մարկոս Պատկերահանի վարպետությունն առանձնապես զգացվում է նկարների գունաշարի շատ ճաշակավոր ընտրության ու համադրման մեջ: Թե՛ ողորկ

---

[8] Հ. Մ. Ճանաշյան. Հայկական մանրանկարչություն, Վենետիկ, 1966, էջ 8:

մագաղաթը, թե՛ օգտագործած հարուստ ներկապնակը, որոնց պայծառ գույները չեն կորցրել իրենց թարմությունը, և թե՛ նուրբ բոլորգիրն ու ոսկեզարդման առատությունը Մարկոսի ձեռագրերը դարձրել են առավել արժեքավոր:

Մարկոս Պատկերահանի ստեղծագործությունները մեծապես արժեքավորվում են նաև պարականոն նկարների հարուստ շարքով: Նկարիչը վեր է հանել ժամանակի ոգուն հարազատ տրամադրություններ՝ ձեռագրերի հարդարման համար ընտրելով ժողովրդական սոցիալ-կենցաղային հարցերի հետ առնչվող թեմաներ, որոնց հիմքը հայ և օտար ժողովուրդների անցյալից եկած սովորույթներն են ու բարոյախոսական տրամադրությունները: Այդ իսկ առումով Մարկոս Պատկերահանը մեծ ներդրում ունի հայ արվեստի, ինչպես նաև հայ հնագիտական, պատմական ու ազգագրական հարցերի լուսաբանման գործում:

Մի երկու խոսք էլ Մարկոս Պատկերահանի որդու՝ Գաբրիելի մասին: Թե՛ Մարկոսի, և թե՛ Գաբրիելի ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում են մակագրություններ, որոնք վերաբերում են հայր ու որդու: Նրանք միասին են աշխատել հատկապես «խորհրդատետրեր» նկարազարդելիս: Գաբրիելի նկարազարդած մատյանները հմուտ պատկերահանի ստեղծագործություններ են, որոնք ստեղծվել են 1667-1703 թթ.: Նրա անունը հիշատակվում է որպես «յոյժ արուեստաբան նկարիչ»[9]: Առանձնապես ուշագրավ է Գաբրիելի 1694 թ. պատկերազարդ «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացու» մատյանը[10]: Ինչպես նկատել են արվեստաբան Հայդե և Հելմուտ Բուշհաուզեն ամուսինները, Գաբրիելի գործերը չափազանց հարազատ են 17-րդ դարի Կ. Պոլսում ընդօրինակված և Վիեննայում գտնվող մի շարք այլ ձեռագրերի նկարազարդումներին (Վիեննա, Ձեռ. 547, 680, 986): Դրանք բոլորն էլ կատարված են միևնույն ոճով, ուստի կարելի է ասել, որ միևնույն դպրոցի աշխատանքներ են[11]: Գաբրիելի մասին Նորայր արքեպս. Ծովականը գրում է. «Կ. Պոլսի յայտնի մանրանկարիչ Մարկոսի որդին էր Գաբրիէլ դպիր, իր կարգին դարձած յայտնի գրիչ մը և մանրանկարիչ մը, նոյն քաղաքին մէջ»[12]: Կասկած չի կարող լինել, որ Մարկոսի և նրա որդու նկարազարդած ձեռագրերը պետք է ավելի շատ լինեն, որոնք դեռևս բացահայտված չեն: Սակայն պետք է ասել, որ որքան էլ հայր ու որդի աշխատել են միասին, զգացվում է նրանցից յուրաքանչյուրի ոճական ինքնատիպ մոտեցումը՝ հատկապես դիմապակերներն ստեղծելիս:

Մաշտոցի անվան Մատենադարանում ժամանակին մեզ հայտնի է եղել Գաբրիելի նկարազարդած 1703 թ. 392 Խորհրդատետրը, որի նկարչական ոճը մեծ աղերսներ ունի Վիեննայի 1694 թ. «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացւոյ» հա-

---

[9] ՄՄ, Ձեռ. 392:

[10] Վիեննա, Ձեռ. 319:

[11] Հայդէ և Հելմուտ Բուշհաուզէն, Նկարազարդ հայկական ձեռագիրն ի Վիեննա, 1978, էջ 43-45:

[12] Նորայր արքեպս. Ծովական, Հայ նկարողներ (ԺԱ-ԺԷ դդ.), Երուսաղեմ, 1989:

ռուստ պատկերաշարով № 319 ձեռագրի հետ: Մեր Մատենադարանում նույնպես ունենք Աղեքսանդրի պատմության մեկ այլ ձեռագիրը, որի անկարիչն անհայտ է համարվում: Ձեռագիրը գրված է Կ. Պոլսում, 1695 թ.: Այժմ համեմատելով Վիեննայի № 319-ի հետ տեսնում ենք, որ այս երկու ձեռագրերում նույնն է գրությունը (նոտրգիր), բնագրերի խորագրերի ցանկերը, միանգամայն նույնն են պատկերագրական կառուցումները, կերպարների ոճական մշակման եղանակները և նույնիսկ երկու ձեռագրերն էլ ունեն միևնույն պատվիրատուն՝ Կ. Պոլսի Պատրիարք Եփրեմ վարդապետը: Դոկտոր Հ. Սիմոնյանը «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացւոյ» ուսումնասիրության մեջ անդրադառնալով այս երկու մատյաններին, կատարում է այն եզրահանգումը, որ այս երկու ձեռագրերը կա՛մ միևնույն անձինն են, կա՛մ ընդօրինակված մեկը մյուսից[13]: Նորովի ուսումնասիրելով՝ կարող ենք ասել, որ Մաշտոցյան Մատենադարանի № 7677 ձեռագրի անհայտ նկարիչը իրոք Վիեննայի թ. 319 ձեռագրի միևնույն Գաբրիել պատկերահանն է՝ Մարկոս Պատկերահանի որդին:

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի № 18 Ավետարանի ընդօրինակող վարպետին, այստեղ մեծ աղերս է նկատվում դարձյալ Կ. Պոլսում գրված, բայց Վիեննայում գտնըվող № 986 Ծարակնոցի անհայտ նկարչի աշխատանքների միջև:

Բոլոր դեպքերում՝ թե՛ Գաբրիելը, և թե՛ հիշված անանուն նկարիչները 17-րդ դարի երկրորդ կեսի և 18-րդ դարի առաջին կեսի Կ. Պոլսի միևնույն կրթօջախի նկարիչներ են և հիմնականում աշխատել են Ս. Գևորգ Ջորավարի Սուլու մենաստանում: Մեզ են հասել նաև Կ. Պոլսի գրիչների ձեռքով ստեղծված հարուստ նկարազարդումներ ունեցող մատյաններ: Դրանցից են, օրինակ, գրիչներ Հովհաննեսի, Մկրտիչ քահանայի, դպիր Տիրատուրի, Խաչատուրի, Հակոբի, Փիլիպպոսի ընդօրինակությունները: Թվարկված գրիչներից մի քանիսը գուցեև նկարիչներ են: Մասնագետների հետագա ուսումնասիրությունները կարևոր ներդրում կլինեն ոչ միայն Կ. Պոլսի հայ գրչության ու մանրանկարչության ավանդույթների պահպանումն ու գործունեությունը ճանաչելու, այլև, ընդհանրապես, հայ միջնադարյան արվեստի պատմությունը հարստացնելու և արժեքավորելու գործում:



[13] Սիմոնեան Ս., Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացւոյ, Երևան, 1989, էջ 43: